Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 9-ի «Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի 2017-2022 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին» N 240-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ ենթակետով.

«4) սույն հավելվածի N 1 աղյուսակում Ախուրյանի ջրամբարի մեռյալ ծավալը հաշվարկված է 50%-ով՝ 7,5 մլն մ^3, որպես անդրսահմանային ջրամբար:».

2) N 1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Ջրային ռեսուրսները, մլն մ^3	Գետավազան		Ախուրյանի ՋԿՏ
	Ախուրյան	Մեծամոր	
Օգտագործելի ջրային ռեսուրսներ			
Գետային հոսքը	506,2	1786,7	2292,9
A+B կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները	102,9	792,5	895,4
Ընդամենը	**609.1**	**2579.2**	**3188,3**
Ռազմավարական ջրային պաշար			
Բնական լճերի ծավալի 1/3 մասը	0,005	0,003	0,008
Ջրամբարների մեռյալ ծավալի 2/3 մասը	5,382	1,34	6,726
C_1 կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները	35,1	-	35,1
Ընդամենը	**40,49**	**1,343**	**41,83**
Ազգային ջրային պաշար			
Գետերի էկոլոգիական թողքը	194,5	106,0	300,5
Բնական լճերի ծավալի 2/3 մասը	0,009	0,006	0,015
Ջրամբարների մեռյալ ծավալի 1/3 մասը	2,693	0,67	3,363
Արփի լճի ջրամբարի մեռյալ ծավալը	18,0	-	18,0
Ձնաբծեր և ֆիոնների դաշտերը	1,05	0,02	1,07
C_2 կարգով հաստատված պաշարները կամ խորքային հոսքը	56,1	143,52	199,62
Ընդամենը	**272.35**	**250.22**	**522,57**

».

3) 14-րդ և 15-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Մեծամորի գետավազանում, որպես Արարատյան դաշտի մաս, նոր հորատանցքի հորատման ջրօգտագործման թույլտվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության ջրի ազգային խորհրդի դրական եզրակացության դեպքում, իսկ ձկնաբուծության նպատակով նոր հորատանցքերի հորատումն արգելվում է: Ընդ որում, հորատված հորատանցքերը հետագայում ենթակա են շահագործման՝ բացառապես հորատման ժամանակ տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված նպատակով:

15. Մեծամորի գետավազանում, որպես Արարատյան դաշտի մաս, արգելվում է ստորերկրյա քաղցրահամ ջրերից ձկնաբուծության նպատակով նոր ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության ջրի ազգային խորհրդի դրական եզրակացության հիման վրա Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հավանության արժանացած ձկնաբուծության զարգացման ծրագրերի:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17-րդ կետով.

«17. Ախուրյանի գետավազանում բնական ջրահոսքի վրա արգելել նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայաններին ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը՝ բացառությամբ Ախուրյանի ջրամբարից ոռոգման սեզոնի և Ախուրյանի ջրամբարից ազատ հոսքի ջրառ իրականացնելու դեպքերի:».

5) N 3 աղյուսակի 3-րդ կետի 1-ին սյունակը «մինչև» բառից հետո լրացնել «նախկին» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: